զսալամբ, զսասարք և զպոր։ Ի զաղանաց արդէն՝ զինձ, զովազ, զզայլ, զարջ և զայլս բազումս։ Ի ձկանց ունի զբազում տեսակըս, զորմէ զրէ պատմիչն Աղուանից. «Բարեվայելուչ և ցանկալի է աշխարհ Աղուանից ամենագիւտ շահիւք, ի բարձրաբերձ կոհակացն Կովկասայ ելանէ գետն մեծ Կուր հեզասահ գնացիւք՝ բերելով յինքեան ձկունս մեծամեծս և մանունս, ճեմելով գայ անցանէ և անկանի ի ծովն Կասպից։ Եւ որ շուրջ զնովաւ են դաշտք։ Գտանի ի նոսա հաց և գինի շատ, նաֆթ և աղ, ապրըշում և բամպակ, անբաւ ձիթենիք։ Եւ հատանի ի լերանցն ոսկի, պղինձ, երկաթ, և զեղնախունկ։ Եւ որ ինչ վայրենիք՝ առիւծ, յովազ, ցիռ, և ի թռչնոց յոլովք արծուիք, բազէք, և նմանք նոցին։ Եւ մայրաքաղաք ունի զմեծ Պարտաւ"։

Ըրքայանիստ աթոռք Աղուանից էին Դարբանդ, Պարտաւ, Պերօժ, Պելուական, Դուլթական, Գարգման և Հունարակերտ։

Իսկ ամթոռանիստ տեղիք կաթուղիկոսաց՝ Գիս, Դարբանդ, Ամարաս, Պարտաւ, Դուլթական, Գանձասար, Կախսէթ եւայլն։

Ցերեւ 427-428 — «Աղուան որպէս յառաջ նոյնպէս և յետոյ ի բազում ժամանակս շարունակ կարգաւ եկաց ընդ հնազանդութեամբ արքայից Հայոց. և որպէս յայտ է, զի երբ Արտաշէս որդի Սանատրկոյ դարձեալ ի Պարսից՝ ի ձեռն Սմբատայ կամէր թագաւորել Հայոց. Երուանդ արքայ ի զբօսանս շրջէր յաշխարհն Աղուանից, որպէս յիւրումն սեպհական կալուածի, ուստի վերադարձեալ ի Շիրակ՝ յարդարէր զճակատ ընդ դէմ Արտաշիսի, և ի նմին զոռ պատերազմի կնքէր զողբալի վախճան կենաց իւրոց։ Սանատրուկ Արշակունի թագաւոր Աղուանից ինքնագլուխ լեալ նշկահէր զտէրութիւնն Հայոց և յազի ձիոյ կապեալ զԳրիգորիս ընթացէր ի դաշտի Վատենեան, սակայն ի ձեռն Խոսրովու Յունական զօրօք նուաճեալ լինէր։ Թէպէտ զօրացեալ ի ձեռն Շապհոյ Պարսից արքային և դարձեալ անտի զճակատ յարդարէր յառաջարին Օշականու, բայց շամփրեալ ի նետ Վահանայ Ամատունւոյ՝ ընդ արեանն փչէր և զհոգին։

«Նախ քան զսոսա նոյնպէս թագաւորք Հայոց այն է Արտաշէս երկրորդ, Խոսրով առաջին և սուրբն Տրդատ զհռչակաւոր պատերազմն իւրեանց յարդարեցին ի նմին իսկ դաշտի, և